ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 1135 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Երևան, Աջափնյակ, Ալիխանյան եղբայրների փողոց թիվ 2 հասցեում գտնվող՝ 56,750,792 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 516,2 քառ. մետր ընդհանուր մակերեսով արհեստանոցը (կադաստրային ծածկագիր՝ 01-001-0207-0004-012), 8,338,600 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 102,3 քառ. մետր ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունը (կադաստրային ծածկագիր՝ 01-001-0207-0004-013) և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող՝ 213,278,572 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 0,55701 հա հողամասը (Հայաստանի Հանրապետության

բաժնեմասը կազմում է 678418/780612, տարածքում առկա է թվով 2 ինքնակամ շինություն, այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից և ամրացնել Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին՝ ռադիոքիմիական ռեֆերենսային լաբորատորիայի կառուցման նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի հետ համատեղ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ